

ՄԵՂԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

7) Ի՞նչ կըսեն ընդհանրական եւ հայոց եկեղեցիներու հայրերն ու վարդապետները վերստին ծնելու մասին:

Քրիստոսի եկեղեցւոյ սրբակենցաղ հայրերէն Ս. Յովհաննէս Ուկերերանը (347-407) Յովհաննէս աւետարանի մեկնութեան համապատասխան հատւածին մէջ կ'ըսէ. «Լսեցէք ամէնքդ, որ առանց մկրտութեան էք, զարհուրեցէք եւ ախ քաշեցէք: Ահաւոր է սպառնալիքը, ահաւոր է նաեւ վճիռը, որովհետեւ հնար չկայ: Ով որ չծնի ջուրէն եւ հոգիէն չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել»: Քանզի ան, որ չէ հազած անէծքներու եւ ապականութեան մահուան զգեստը, չէ կրած տէրունական նշանը, օտար եւ անցողական է: Քանզի արքունական մատանին չունի եւ եթէ յանկարծակի մահը հասնի եւ առանց լոյսի (մկրտութեան) այստեղէն մեկնի, նոյնիսկ եթէ բիւր բարիքներ ունենայ, ուրիշ բան չսպասեր իրեն եթէ ոչ գեհենի անշէջ հուրը եւ անլուծելի կապանքները: Թող ոչ ոքի պատահի այստանշները, իսկ անոնցմէ ազատելու միակ միջոցը Ս. խորհուրդին արժանանալն է:

Մեր հաւատքի հայր, Ս. Գրիգոր Լուսաւորիչի վերագրուող «Յաճախապատում»-ի երկրորդ ճառին մէջ, որ Ս. երրորդութեան անձերու մասին է, Ս. աւագաննէն վերստին ծննդեան ակնարկելով կ'ըսուի.

ԱՊԱՆԴԱԿՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ


ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԿԱՆՔ 5 - ՄԱՐԴ ԵՒ ՀՈԳԻՆ

Քրիստոսի օրով ալ կային Սաղուկեցիները, որոնք չին հաւատար հոգիի գոյութեան, ինչպէս նաև՝ մեղեներու յարութեան (տե՛ս Գրծ. 23.8): Յիսուս լաւ պատասխան տուաւ անոնց, երբ օր մը զինք փորձելու համար եկան եւ մեղեներու յարութեան կապակցութեամբ հարցում մը ըրին: Սոհիթէն օգտուելով, Քրիստոս տուաւ պատասխան մը՝ որ ինքնին կ'ենթադրէր հոգիին անմահութիւնը. «Սնոր համար չէ՞ որ մոլորած էք, քանի ո՛չ Գիրքը գիտէք եւ ո՛չ Սասուծոյ զօրութիւնը... Սեղելներուն համար՝ թէ յարութիւն կ'առնեն: Մովսէսի գիրքին մէջ չէ՞ կարդացեր մորենիին կապակցութեամբ, ինչպէս Սասուծ անոր խօսեցաւ ըսելով. “Ես եմ Սքրահամի, Խահակի եւ Յակոբի Սասուածը”: ԱնիկՍ. ՄԵՇԵՆԵՐՈՒՈՒՆ Ս.ՍՏՈՒՄԾԸ Զէ, ԱՅԼ. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒԻ. ուրեմն դուք իխսու մոլորած էք» (Սր. 12.24. Մտր. 22.31: Ղուկ. 20.37-38): Շատ յատկանշական է, որ ըստ Ղուկասի Ս.Ետարանին, այդ խօսքին անմիջապէս ետք Քրիստոս կ'աւելցնէ. «ՈՐՈՎՃԵՏԵՒ Ս.ՄԷՆՔԸ Ա.ՆՈՐ ՀԱՄԱՐ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ» (Ղուկ. 20.38):

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ քերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՑՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ՀՈՅ
(Ս. 119. 105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՅԻՆ 2018

ԹԻՒ 20

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՁՈՒՄՆԵՐ

ԳՐԸ. 2.1-21

ՅԻՍՈՒՏ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆ ՅՈՎՐԱՆՈՒ 14.25-31

ՀՈԳԵԳԱԼՈՒՄ (ՊԵՆՏԵԿՈՍԵ)

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակալին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի այսի դրկէ իմ ամունվս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ՝ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը բողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Սի՛ խոռվիք եւ մի՛ վախնաք: Լսեցէք ինչ որ ըսի ձեզի, թէ «Ահա կ'երրամ, բայց կրկին պիտի զամ ձեզի»: Եթէ զիս կը սիրէք ուրախ պիտի ըլլաք, որ Հօրս կ'երրամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատար: Այլեւս երկար պիտի չխօսին ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխաննը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ, թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը՝ որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեն: Ելքը, երբանք այստեղէն:

Մի՛ խոռվիք եւ մի՛ վախնաք

Քրիստոս յանախ իր աշակերտներուն կը բաջակարգ ըսելով մի՛ վախնաք, որովհետեւ վախր խաւարի որդիներուն կը պատկանի: Անոնք, որոնք Քրիստոսի լոյսը զգացած են վախր գոյութիւն չ'ունենար անոնց կեանքին մէջ: Եւ ահա այսօր Հոգեգալուստի տօնին առիթով Քրիստոս կու գայ աւետարանի նամրով յիշեցնելու բոլոր այն հաւատացեալներուն, որոնք Քրիստոսը ունին իրենց կեանքին մէջ թէ պէտք է միշտ բաջարար ապրին իրենց կեանքին: Միշտ յիշենք սաղմոսասացի խօսքը, որ կ'ըսէ. «Տէրն է իմ լոյս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես. Տէրն է իմ կեանքին ապաւենը, որմէ՞ պիտի դողամ ես: (Սաղմու 27. 1):



ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ԿՐԱՎՅՎ ԱԴՕԹԵԼ ՄԵՐ ՎՐԱՅ:

Ո՞չ: Ամէն մարդ՝ ամէն մարդու համար կրնայ աղօթել, բայց ամէն մարդ՝ ամէն մարդու վրայ չի կրնար աղօթել: Դրաքսզի կարենանք մարդու մը վրայ աղօթել կա՛մ պէտք է եկեղեցական զարգ ունենայ եւ կա՛մ պէտք է յատուկ գերպով Աստուծոյ կողմէ կանչուած եւ կոչում ստացած ըլլանք: Աստուծոյ կողմէ կանչուած մարդը՝ «աղօթֆի հռ-դի» պէտք է ունենայ: Իսկ «Աղօթֆի հռ-դի»-ն Աստուծոյ հոգին է որ կը պար-գեւէ:

Զաքարիա 12.10-ին մէջ կը խօսի «աղօթքի հոգի»-ին մասին։ Երբ կ’ը-սենք, թէ այսինչ մարդը Սուրբ Հոգիին կողմէ իրեն տրուած «աղօթքի հոգի» ունի, չենք հասկնար որ ան պարզապէս Սուրբ Հոգիով լիացած ու մկրտուած անձ մըն է, այլ՝ կը հասկանանք որ ան Սուրբ Հոգիին օծութիւնը ունեցող մըն է, որ աղօթելու պարգևը ունի, եւ կըր-ճայ աղօթել հիւանդի մը վրայ եւ բժշ-կել զինք։ Հարկաւ միայն հիւանդի մը լիրայ չէ որ կրնայ աղօթել, այլ կրնայ աղօթել ոեւէ անձի վրայ եւ յայտնել անոր Աստուծոյ կամքը իր անձին լերաբերեալ եւ Աստուծոյ պահանջը-ածը իրմէ։ «Աղօթքի Հոգի» ունեցող մարդուն, Աստուած կը յայտնէ որոշ որականութիւններ որոշ անձերու մա-սին, որոշ նպատակով մը։ Յակոբոս առաքելու կ’ըսէ. «Մէկը հիւանդացա՞ւ թող կանչէ եկեղեցւոյ երեցները, որ-պէզի իր վրայ աղօթեն եւ իւղով օծեն զինք, Տիրոց անունով» (Յկ. 5.14):

Կրնայ սորբութեան եւ արդարութեան կեանք ապրող մարդ մը, նաեւ իր ձեռքը դնել մեր գլխուն վրայ եւ աղօթել մեզի համար:

Քրիստոսի Յարութենէն 50 օր
ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով
ժողովուրդ հաւաքուած էր Պետե-
կոստէի առթիւ, առաքեալները Տիրոց
պատուէրին համաձայն Վերնասուն
հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դար-
ձած կ'աղօթէին՝ սպասելով Ս. Հոգիին
գալուստը, ինչպէս Յիսուս խոստա-
ցած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն
մը հեծից երկինքէն եւ լեցուց ամբողջ
տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն
լեզուներ, որոնք տարածուեցան եւ
հանգչեցան իւրաքանչիւրին վրայ:
Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուե-
ցան եւ սկսան տարրեր լեզուներով
խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու
տար:

Սուաբեալները գօրանալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք երուսաղէմ հաւաքուած էին անակնակալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետքու առաքեալի նառէն եսք, 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

Ս. Հոգեգալուստը եղաւ Հրեաներու Զատիկն էն 50 օր ետք՝ Պետտեկոստէին, երբ Մովսէս մարգարէին միջոցաւ Աստուած հրեաներուն պարգևեց Տանարաննեան :

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ

ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՂՈՄՈՒԹԻՒՆԸ ԳԻՆ ԱՐԲԱՑՈՒԹԵԱՆ

Ծատ դիւրին է սատանային հետ
կոռուիլ, ինչպէս լոյսը խաւարին հետ կը
պայքարի եւ բարին՝ չարին հետ: Սա-
տանան խաւար է ու չարութիւն: Եթէ
մենք լոյս ըլլանք եւ բարի, կը հալածենք
զայն, ինչպէս լոյսը կը հալածէ խաւարը,
եւ բարին՝ չարը: Իսկ եթէ մենք ալ խաւար
ըլլանք, այսինքն չար, ան կ'որսայ մեզ եւ
խառնուելով կը միանանք իրեն: Որպէս-
զի չպատահի ասիկա, միշտ գոհութիւն
յայտնենք Աստուծոյ, ինչպէս «Երկինքը
կը պատմէ Աստուծոյ փառքը»: Երկինքը
ո՛չ թէ ձայնով կը փառաւորէ զԱստուած,
այլ՝ իր կերպարանքով ուրիշները օրի-
նութեան կը մղէ: Նմանապէս, անոնք
որոնք բարիք կը գործեն, անոնց պատ-
ճառաւ ուրիշները զԱստուած կը
փառաւորեն:

Երբ շատերը կը խրատեն, ո՞չ թէ եր-
կինքը օրինակ կը բերեն, այլ՝ մարդիկ,
որոնք գազաններէն աւելի չար էին եւ
յետոյ հրեշտակներու հաւասար եղան եւ
այս ձեւով բազմարիւ չարեր բարի
կ'ընեն: Եթէ երկինքը այսքան ժամանակ
տեսներով այդ բոլորը, չի կրնար չար
մէկը բարի ընել, մինչ մարդը կը յաջողի
իր նմանը բարի դարձնել, կը նշանակէ
թէ մարդս շատ աւելի գեղեցիկ է քան'
երկինքը ու բոլոր զարդերը: Հետեւա-
բար, եթէ անոնցմէ աւելի վար գտնուիք,
ի՞նչպէս կրնանք արքայութեան արժանի
ըլլալ, երբ ամէնքս ալ մեր գործերով ու
խօսքերով միշտ կ'անարգենք զԱստուած,
զոր անոնք կը փառաւորեն:

Ս. Ա որ թերանը, ականջը կամ մարմինի անդամները են որեւէ մէկը անարգէ, այդ անարգանքը կ'երթայ, Քրիստոսի:

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՐՑԻ

Ի՞ՆՉ Է ԱՍՔՆԵՆ ՍԻՐԱԾ ԲԱՆԴ

ՍԵԿՐ ըսաւ. «Հարցուցի աշակերտի մը թէ ի՞նչն է այն բանը, որ ամէնէն շատ կը ցանկայ: Ան պատասխանեց. «Գիրքեր»: Նոյն հարցումը հարցուցի կծիի մէկու մը, եւ ան պատասխանեց. «Դրամ»: Հարցուցի մուրացկանի մը, եւ ան ըսաւ. «Հաց»: Հարցուցի գինենոյի մը որ ըսաւ. «Գինի»: Հարցուցի շատ մը ուրիշներու. ոմանք ըսին՝ հարստութիւն, ուրիշներ՝ փառք, ուրիշներ՝ առողջութիւն: Սիրելի՛ ընթերցող, նոյն հարցումը քեզի կ'ուղեմ, ի՞նչ կը սիրես ամէնէն շատ: Կը սիրե՞ս ապրիլ Քրիստոսի մէջ: Կը սիրե՞ս նմանիլ Քրիստոսի: Ոմանք իրենց փորք կը սիրեն, իսկ դուն Կենաց Հացը սիրէ: Ոմանք իրենց տուները կը սիրեն, իսկ դուն երկինքը սիրէ: Ոմանք հազուտներ կը սիրեն, իսկ դուն «լաւագոյն պատմուճանին» ու «Ճերմակ պարեգօտին» ցանկայ:

ԱՍԿԵՂԵՆ ԽՈՍՔ

Սիրալիիր պատասխանը զայրոյթը կը
մեղմացնէ, իսկ իհսու խօսքը բարկու-
թիւնը կը գրգռէ:

Իմաստութերուն լեզուին հարացաւ է բարի խօսքը, անզգամներու բերնէն միայն չարիք կը բխի:

Ամէն տեղ Տիրոջ աչքերը կը տեսնեն
եւ բարինեռ եւ սարեռ:

Սյն լեզուն, որ բժշկութիւն կը բերէ՝
կեանքի ծառ է: Ան որ գիտէ տէր ըլլալ
անոր՝ հոգեակս պիտի յագենաւ:

Անգլամբ իր հօրը խրատը կ'անար-
գէ, իսկ ան որ յանդիմանութեան կը
հանդուրժէ՝ խոհեմ է: Եթք արդարու-
թիւն տիրէ, ամէն ինչ կը բարգաւաճի,
իսկ ամբարիշտները արմատախիլ
պիտի բլան: Ա.Ռ.Ա.Կ 15